№ 62 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՄԱՐՏԻ

1912
ԹԱՒԱՍՈՒՆԱՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ՔՐԻԳՈՐ ՕՐՔՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՄԱՐՏԻ № 62

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարուանը և 7 ամսեանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Ամբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուղեղով

Յայտարարութիւնների համար վճարում են հրատարակչութիւնը տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆԱՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիէնայում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՒԻՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է խորին վշտով իր աւագագոյն աշխատակից՝

ԳԱԲՐԻԷԼ
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ-ՀԱՄՄԱԼԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 16-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հանգուցեալի բնակարանից (Լերմոնտովսկայա փ.) հինգշաբթի, մարտի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Վանքի մայրավանդեցին։

Մարտի 16-ին, գիշերվայ ժամը 10-ին խաղաղ վախճանվեց

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ,
(ՀԱՄՄԱԼԸ)

որի մասին յայտնում են հանգուցեալի այրին և որդիքը։ Եուղարկաւորութիւնը իր բնակարանից (Լերմոնտովսկայա փող. № 16) հինգշաբթի, մարտի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Վանքի մայրավանդեցին։ Հանգուցեալի կամքն է պահել չը դնել։ 175. 3—3

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Լոյս տեսաւ այսօր «ՏԱՐԱԶԻ» հրատարակ յատկացած Գաբրիէլ Սունդուկեանի ժեծապիր պատկերով՝

Մեծ դրամատուրգը խորասուզված թախիծի մէջ։

Պէպօ-արձան, Կտակը և այլն։

Գինը այսօր Թիֆլիսում, Թաղման օրը, հատը 10 կ., վաղվանից և ճանապարհածախսով հատը 25 կ., 10-ը—2 ր., 25-ը—4 ր., 50-ը—7 ր., 100-ը—12 ր.։

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։

Դիմել՝ Тифлисъ, БЮРО ПЕЧАТИ, Голов. пр., 41.
26. 1—1
առ.

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը յայտնելով, որ առաջիկայ ԶԱՏԿ ՏՕՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ շնորհակալութեամբ ընդունում է ԱՂՔԱՏՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԻՐՆԵՐ դրամով, մթերքներով և շորով ամեն օր ժամը 9-ից մինչև 2-ը, երեկ. 5-ից մինչև 7-ը, ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7 с. д.) խնամարհաբար կը բաժանէ դրանք տնկարներին օգնութեան հասնել թշուառներին։

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Ապրիլի 25-ին լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» յատուկ №-ը, ամբողջ նուիրված նահապետ դրամատուրգ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ

աւելի քան 50 պատկերներով։

Բաժանորդագրվողները այդ պարագայում №-ի 1 ր. մինչև ապրիլի 10-ը բաժանորդագրվողների համար, այնուհետև 2 րուբլի։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Голов. пр. 41.
(ա.օ.) առ. 26. 4—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտնում է ի տեղեկութիւն ամենքի, որ Սօլոգոսակի բազարի շրջանում տօնական առևտուրը տեղի կունենայ հետևեալ տեղերում. 1) Զուկը, պապաքները, կուլիչնոյը և դրանց վերաբերեալ անհրաժեշտ մթերքները կը վաճառվեն Բաղարնայա հրապարակի և Կուզնէչնայա, Ներսէսօվսկայա ու Ռուսկայա փողոցի ձախ կողմի վրա, 2) Վէտչինա, կօլբասային և պանրային ուտելեղէնները՝ Ռուսկայա փողոցի աջ կողմի վրա, 3) Գիւղերից բերված հաւերը, ձուերը, մորթված խոշոռները և այլն՝ Բարօնսկայա փողոցի և Բաղարնայա փողոցի մի մասի վրա, 4) Կենդանի գառներն ու կանաչեղէնը՝ Գրաֆսկայա փողոցի վրա և 5) Կենդանի խոշոռները և սայլերի վրա վաճառվող հաւերը՝ Փօքր-Վանքի փողոցի վրա։

Առևտրա-տնտեսական ոստիկանութեան գրասենեակը (Ռուսկայա փ., տուն Նէրսէսեան դպրոցի, որտեղ շուկան է) ամբողջ աւագ-շաբաթվայ ընթացքում բաց կը լինի առաւօտեան ժամը 6-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։

ՍՈՒՐԲ-ԽԱՉ բաղաքի համար ԽՄԲԱՊԵՏ

ԱՐԴԷՆ ՀՐԱՒԻՐՎԱԾ Է։

Ուսաի խնդրում եմ ինձ դիմումները չանել։

Ն. Ճուղուրեան
182. 1—1

ՆՕՏԱՐ
ԲՕԼԷՍԼԱՎ ՎԱՅԼԱՎՕՎԻՉ
ԼՈՒԿՕՄՍԿԻՆ
ԲԱՑԵԼ Է ԳՐԱՍԵՆԵԱԿ
Դանօվսկայա, տուն № 7.

ԹԱԽԾԻՔ

Գր. ՄԱԿԱՐԵԱՆ

Սերբին եւ երեխայոց
Հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէլլանօշների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—78

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՏՆԵՐ

Նիկօլաևսկայա փողոցի վրա № 37, Տուբենևսկայա փող. վրա՝ № 2 և 4, Աճեմկայա փող. վրա՝ № 55, Գևկօվսկայա փող. վրա՝ № 3։ Ծախվում են նաև՝ ԿՕՊԱՆԵՐԸ—Մետխում և Սբմեանսկի բազարի մօտ, ՍՓՅՈՒՌՔԸ—Գասպի կայարանի մօտ, և 10 ԴԵՍ. ՀՈՂ ու ՄԻ ՏՈՒՆ—կօջօրում։ Ամեն օր դիմել առաւ. ժամը 9—12-ը „Огражденіе" հիւանդոցը № 11,

ԱՆՑՈՒՄՆ ԴԷՊԻ ԳԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այսօր, մարտի 22-ին, հայ մեծաւոր և գրական աշխարհը, հայ հալալ, չարքաշ ժողովուրդը գերեզմանին է յանձնում իր ամենամեծ զաւակներից մէկին, իր կեանքի մեծ երգչին և նկարագրողին՝ Գաբրիէլ Սունդուկեանին։

Եւ յանձնելով Գաբրիէլ Սունդուկեանի թանգագին աճիւնները հողին, մենք յանձնում ենք գրաւով նրան յաւիտենականութեան, անմահ անէութեան։

Ցոյն ամենամեծ փիլիսօփայ՝ իմաստուն Սօկրատին հարցնում է Կրէօն։

— Սօկրատ, ինչ ինչպէս թաղենք։

— Չարմանալի է այս մարդը, —պատասխանում է Սօկրատը դառնալով միւսներին.—հասկացէք սրան, որ Նա Սօկրատին թաղել չէ կարող. իսկ նրա մարմինը՝ ինչպէս կամենաք։ Միայն մի ապրաղող գտնեցէք Սակրակատին։

Դրանով նա կամեցաւ արտայայտել այն միտքը, թէ Սօկրատի մարմինը, նիւթական մարմինը կարող էք թաղել ուր կամենաք, բայց Նա անմահ կը մնայ իր հոգով, իր մտքով, իր քարոզած վարդապետութեամբ։ Սօկրատի մարմինը կանհետանայ դարերի ընթացքում, բայց անմահ կը մընայ Սօկրատի հոգին, միտքը յաւիտեան։

Նոյնը և Գաբրիէլ Սունդուկեանի մասին կարող ենք ասել։

Նրա մարմինը, նիւթական աճիւնները հազող ենք թաղե. ա կամենանք։ Եթէ թաղենք նոյն իսկ հասարակաց գերեզմանատանը և ոչ Վանքի բակում, դրանով չէը, որ նա կը մնար անմահ, անմոռանալի։ Նա անմահ կը մնայ հայերի սրտում, ապագայ հայ սերունդների սրտում իր անմահ գործերով, իր «Պեպօյով», իր «Բանդած օջախով», իր «Խոթաբալայով»։ Նրան մենք թաղել չենք կարող, նա կենդանի է իբրև ստեղծագործող, և կենդանի կը մնայ յաւիտեան։

Հայ ժողովուրդը, հայ մտաւոր և գրական աշխարհը այսօր, մարտի 22-ին, չէ թաղում Գաբրիէլ Սունդուկեանին, Պէպօյի հեղինակին, այլ յանձնում է նրան յաւիտենականութեան, անմահութեան։ Գերեզմանը, որի մէջ պէտք է ամփոփենք նրա աճիւնները, միայն այն դուռն է, որով նա համաձայնակ կերպով պէտք է անցնէ անմահութեան։

Ցարգանք դէպի անմահութիւն, յաւիտենականութիւն անցնող, հայ դրամատուրգիայի վետերան՝ պատկառելի հայր Գաբրիէլ Սունդուկեանին։

Ցարգանք «Մշակի» ամենահին և բեղմնաւոր աշխատակցին։

Ցարգանք արժանաւոր քաղաքացուն, ազնիւ հայրենասէրին։

Հ. Աւետիքեան

«ԳԱՉՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԳՈՐԾԻ ԳԱՏԱՎԱԾՈՒԸ

(„Т. Л."-ի սեփական հեռագիր)

Պետերբուրգ, 21 մարտի

Այսօր, մարտի 20-ին, սենատի յատուկ ատեանը «Գաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով կարգաց իր դատավճիռը, որով յայտնաւոր են ճանաչվում և դատապարտվում սեփականութեան բոլոր իրաւունքներից զրկման և աքսորի ժամանակիը աշխատանքների՝ Սարգիս Մանասեանց 6 տարով, բժիշկ Համօ Օհանջանեան, պարսկահպատակ Ղազարեան և Մուրադեան՝ իւրաքանչիւրը չորս տարով, ըստ որում Մուրադեանի դատավճիռը չնչվում է ուրիշ դատավճռով։ Ազատ Դաւթեան, Մեհրաբեան, վաճառական Սարգիս Եղիազարեան, Թայրեան, Ա. Չաւիշեանեան, Շարաֆեան Ալէքսանդր, Ղարիբեան, Մատինեան, Սրուանձտեան, Խօջայեան, Վարդանեան, Սողոմոնեան, Գրիգորեան, Աւագեան, պարսկահպատակ Մամիկոնեան, Մարկոս Դաւթեան, Ալ. Մաշուրեան, քահ. Տէր-Իսրայէլեան, Փարեմուզեան, Ղահրամանեան, Առաքսեան, Ասատուրեան, տոհմական պատուաւոր քաղաքացի Տէր-Դանիէլեան և Տէր-Մարտիրոսեան դատապարտվում են սեփականութեան բոլոր իրաւունքներից զրկման և աքսորի Սիբիր։ Տիտուլիարնի օսմանեան Տէր-Աւետիքեան, վաճառական Շապաջնիկեան, կօլէժ. սեկրետար Աւետիք Սահակեան և Եարօյեան՝ մի-մի տարով բերդարգելութեան։ Ազնուական Զաւրեանը $2^1/_2$ ամսով բերդարգելութեան։ Մն. Նալբանդեան և երդ. հաւ. օգնական Զուբարեան՝ իւրաքանչիւրը կէս տարով բերդարգելութեան։ Դիլաչեան և Մնացականեան՝ ամեն մինը երեք ամսով բանտարկութեան։ Կարապետեան, Դալլիխով, Մակասեան, իրան ազնուական անուանող Լեւոն Աբովեան, Ալանակեան, Յարութիւնեան, Թուխմանեան, տոհմական պատուաւոր քաղաքացի Կօրժէնեան, Մեհրաբեան, Գ. Առաքելեան, Թիւրքահպատակ Համբարձումեան, Մատինեան և Սա. Խաչիկեան դատապարտվում են բերդարգելութեան 1—2 տարի ժամանակով վերջին տասներկու հոգին ազատ են յայտարարվում նախնական բանտարկութիւնը հաշւի առնելու պատճառով։ Այվազեան դատապարտվում է բոլոր առանձնայատուկ անձնական ու սեփականութեան իրաւունքներից ու պատուոյ իրաւունքներից զրկման և պատժիչ բաժանմունքների երեք տարով, ազատվելով նախնական բանտարկութիւնը հաշւի առնելու պատճառով։

Մնացած 94 հոգին արդարացան։

—

Պետերբուրգ, 21 մարտի

Երէկ սենատը կայացրեց իր դատաչռը, որը ըստ էութեան ճանչց ու քննի ժամ. Ամենածանր պատիժ Սարգիս Մանասեանի, բժ. Օհանջանեանի, Ղազարեանի և Մուրադեանինն է։ Մօտ հարիւր մարդ արդարացան, որոնց թւումն են Ալ. Մելիք-Ազարեան, բժ. Լեւոն Աթաբէգեան, Յովհ. Թումանեան, Ն. Սաթունեան, Մինաս Բերբերեան, Սիրական Տիգրանեան և այլք։ Արդարացածներին ազատ թողին։

—

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

20 մարտի

Պետերբուրգ.—«Գաշնակցութիւն» կուսակցութեան գործի առիթով դատապարտվում են. տաժանակիր աշխատանքների Մանասեանը վեց տարով, բժիշկ Օհանջանեանը, Ղլարեանը (?) և Մուրադօվը՝ չորս տարով. Մուրադօվի վերաբերմամբ դատավճիռը չնչվում է ուրիշ վճռով. աքսորի՝ 26 հոգի. երեք ամսից մինչև երկու տարով բերդարգելութեան՝ 21 հոգի. պատժիչ բաժանմունքների՝ 1 հ.։ Թէ սա և թէ 12 ուրիշ հոգի պատժից ազատվում են նախնական բանտարկութիւնը հաշւի առնելու պատճառով։ Արդարացան 94 հոգի։ (Հեռագիրը խեղաթիւրված լինելու պատճառով՝ պահանջվեց կրկնել)։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

20 մարտի

Պետերբուրգ.—Պետական խորհրդի առաջին դեպարտամենտը, քննելով Կուբլօվի, Վէրիժնիի, Կուլեաբկօյի և Սմոլենսկօվսկի դէմ քրէական դատ սկսելու գործը, որոշեց բացատրութիւններ պահանջել յիշեալ անձերից։

—

Պետերբուրգ.—Պաշտօնական անձանց ներկայութեամբ հանդէսով թաղվեց աւագ-արարողապետ Դէնդրիկօվը։

—

Բուդապեշտ.—Պատգամաւորների պալատ։ Իւստի կուսակցութեան անդամ Բակօնիին մատնանշում է, թէ լուրջ վտանգ է սպառնում գահի և ազգի փոխադարձ տարաձայնութիւնից։ Դէպա Պօլօնին գահից հրաժարվելու լուրերը գնում է չափազանց տարօրինակ և ասում է, որ՝ ունգարական օրէնքներով թագաւորը կարող է գահից հրաժարվել միմիայն ազգի համաձայնութեամբ, և ոչ թէ հրաժարվել իր պարտականութիւններից, ինչպէս մի ակցիօներական ընկերութեան նախագահ (բուռն բողոք աջից)։ Հակամիապետական հայեացքների տէր Կուէնթէդերվարին իբրև պրեմիէր ապագայում ընդհարվելու է գահաժառանգի հետ (բուռն բողոք աջից)։ Կառավարութիւնը խոշորագոյն սխալ գործեց, կապելով նոր կաբինէտ նշանակելը թագաւորի գահից հրաժարվելու մտադրութեան հետ։ Նախագահը Պօլօնիին կարգի է հրաւիրում թագաւորին ակցիօներական ընկ. նախագահի հետ համեմատելուն համար։ Սուէմէգիին բացատրում է. «Թագաւորը այժմ թագաւորում է հաւանօրէն ձեր ողորմութեամբ»։ Նախագահը կարգի է հրաւիրում Սուէմէգիին։ Պօլօնին և Սուէմէգին խնդրում են պալատին ներել իրանց. նրանք չէին մտորում յարգանք չը տածել դէպի թագաւորը։

—

Պրագա.—Կուսակցութեան գործադիր կոմիտէը կրամարժին ընտրեց իր նախագահ հանգուցեալ Եկարտի փոխարէն։

Գործադուլային կենսօրեական կոմիտէը վճռեց մարտի 21-ին առաջարկել հիւսիս-արևմտեան քարածխային շրջանի բանւորների ժողովներին համաձայնել տերերի զիջումներին և աշխատանքները վերսկսել։

—

Թաւրիզ.—Դրութիւնը Արդաբիլի մերձ սահմանագլխին չափազանց յուզալի է։ Թէհրանում ազատվել են մի քանի տասնեակ շահսէվան պարագլուխներ, որոնց երկու տարի առաջ կալանաւորել էր Եփրեմը։ Շրջանի ազգաբնակութիւնը շրջապատում է մեր հիւպատոսին՝ խնդրելով պաշտպանել իրանց կեանքն ու գոյքը ընդդէմ շահսէվան աւազակների։

—

Լօնդօն.— «Թայմսը» առաջնորդող կարելի յուսալ, թէ աշխատանքները ամենուրեք անմիջապէս կը վերսկսվին։ Ոչ ոք կայ, որ Զատկից յետոյ գործադուլը վերջնապէս բողոքվին, սակայն շատ ժամանակ կանցնէ, մինչև որ Անգլիայի արդիւնաբերութիւնը կը շտկվի անցրած ծանր ճգնաժամից։

—

Լօնդօն.— Համայնքների պալատ. Լլօյդ-Ջօրջը ներկայացրեց բիւջէն և յայտնեց, որ եկամուտները ծախքերից 6,545,000 ֆունտով աւելի են, որ երբէք չէ եղել։ Ծախքերը հաշւած են 186,885,000 ֆ. և անցեալ տարվայ հետ համեմատած 5,619,000 ֆունտով աւելի։

—

Կահիրէ.—Անգլօ-եգիպտական կառավարութեան ուղարկած զօրամասի վրա յարձակվեց անուանի ցեղը Սպանվեցին հինգ օֆիցէր և 34 զինուոր։ Անուանիների կորուստները շատ խոշոր են։

—

Ստօկհօլմ.—Կառավարութիւնը բիկստադին օրինագիծ ներկայացրեց տալու կանոնց քաղաքական իրաւունքներ տղամարդկանց հետ համահաւասար։

—

Զիկագօ.— Գործադուլ են անում 15,000 բանւոր։

—

Վաշինգտօն.— Մօրգան-Նուստերը նշանակվեց «Նացիօնալ-Սիտի ընկերութեան» հարաւ-ամերիկական ներկայացուցիչ, որ բանւորներ է ուղարկում Հարաւային Ամերիկայից։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

20 մարտի

Սալօնիկ.—Կարաբուրուն բերդի զօրքերի մէջ ընդհարում եղաւ «Մ. և Ա.» կոմիտէի օֆիցէրների և լրբէրաչների միջև ընարողական պայքարի հողի վրա. 10 ընդդիմադիրներ կալանաւորվեցին և արտաքսվում են զօրքից։

—

Կ. Պօլիս.—Նախկին դեսպան Զարիկօվը «Կօրօլեվա Օլգա» շոգենաւով մեկնեց Օդեսա։ Ճանապարհ դրին սուլթանի ներկայացուցիչը, բոլոր մինիստրները, մեծ պետութիւնների ներկայացուցիչները, ռուսաց դեսպանատան պաշտօնեաները լիակատար կազմով, ռուս գաղութի ներկայացուցիչները։

Դեսպան Գիրսը ապաւում է գաղութական շաբաթում։

— Չէ՞... իսո՛ւր... ու... պարծե՛ս... Ես ինձ չեմ ներում... Ես ինձ չեմ ներում... Ես... ես... ես...

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՕՍՔ

Հայրենիքի ուշիկներ ու մեծ մեղքեր
Ողողում են ամբողջ աշխարհը մեր։
Հայրենիքի ուշիկներ ու մեծ մեղքեր
Ողողում են ամբողջ աշխարհը մեր։

Հայ ազգի ներկայ վիճակը ուրիշ ազգերի հետ համեմատելով՝ մենք տեսնում ենք, որ մեր ազգը ամենից ետ է մնացել ամեն տեսակ կուլտուրական գործերում։ Մեր ազգի մեջ ամենից քիչ են գրագետները, ամենից քիչ են տպարանները, ամենից քիչ են գրքերը, ամենից քիչ են թերթերը։ Ուրիշ ազգերի մեջ ամեն մի գյուղ, ամեն մի քաղաք ունի իր տպարանը, իր թերթը, իր գրքերը, իր գրագետները։ Մեր ազգի մեջ ամենից շատ գրագետներ կան Ամերիկայում, ուր հայերի թիվը հազիվ 15 հազարի է հասնում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը գրագետ է, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/10-ը գրագետ է։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը թերթ է կարդում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը թերթ է կարդում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը գիրք է կարդում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը գիրք է կարդում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը տպարան ունի, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը տպարան ունի։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը թերթ է հրատարակում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը թերթ է հրատարակում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը գիրք է հրատարակում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը գիրք է հրատարակում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը տպարան ունի, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը տպարան ունի։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը թերթ է հրատարակում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը թերթ է հրատարակում։ Ամերիկայում հայերի թվի 1/3-ը գիրք է հրատարակում, իսկ Թուրքիայում հայերի թվի 1/100-ը գիրք է հրատարակում։